

## ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐՔԱՅԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Լեզվական ցանկացած իրողություն կամ միավոր լեզվի զարգացմանը զուգընթաց ենթարկվել է փոփոխության: Ուսումնասիրելով հարակատար դերբայի գործածությունն ու արտահայտության ձևերը բարբառներում՝ նախ՝ կարևորել ենք նրա առաջացումը, դրսևորումները գրաբարում և միջին հայերենում, ապա՝ անդրադարձել ենք բարբառներին:

Գրաբարը չի ունեցել հարակատար դերբայ<sup>1</sup>: Նրա իմաստն արտահայտվել է անցյալ դերբայի միջոցով, ինչպես՝ անցեալ> անցած, կազմեալ> կազմած// կազմված, գրեալ> գրած// գրված, կոչեալ> կանչած//կանչված, գտեալ>գտած// գտնված և այլն<sup>2</sup>: Միջինհայերենյան գրականության մեջ հանդես է գալիս հարակատար դերբայը՝ ձևավորվելով անցյալ կատարյալի հիմքից ած և եր վերջավորություններով: Ած վերջավորությամբ հարակատար դերբայը հայ գրականության մեջ գործածվել է VII դարից, բայց ավելի տարածում է ունեցել X դարից, ինչ և պայմանավորված է գրաբարի նահանջման և բարբառների զարգացման երևույթի հետ, քանի որ այդ ժամանակաշրջանում քերականական տարբեր իրողություններ արտահայտել են ոչ թե միևնույն՝ կաղապարային ձևով, այլ զուգածնություններով<sup>3</sup>: Ած վերջավորությունը սերում է «ած–ել բայի արմատից (հմմտ. գթած «գութ ածող»), հնարավոր է համարվում գոյականակազմ –ած–ի հնդեվրոպական ծագումը՝ ց՝ > ծ անցմամբ»<sup>4</sup>, ինչպես և՝ «հնխ. ag՝ արմատից, որի ներկայի I դեմքն է \*agō»<sup>5</sup>, այսպես և՝ \*ag–«քել» (հայ. ածեն), \*gēn–«ճանաչել» (հայ. ճանաչեմ < ծանաչեմ, ծանեայ), \*gēn–«ծնել» (հայ. ծնանիմ)<sup>6</sup>: Ած մասնիկի առաջացմանը անդրադարձել է հայագետ Պետերմանը՝ նշելով, որ այդ վերջավորության ծ աֆրիկատը ծագում է անցյալ դերբայի ց աֆրիկատից<sup>7</sup>: Գրաբարյան ժամանակաշրջանում հարակատարի՝ հետագայում ած–ով կազմված ձևերը դերբայացել են, օր.՝ ասած, գործած, կատաղած և այլն, իսկ որոշ բայաձևեր արտահայտել են գոյականի և ածականի իմաստներ, օր.՝ սոված, սիրած, խորոված և այլն: Ած վերջածանցով ձևեր են եղել գրաբարում, ինչպես՝ հատուած, շինած և այլն. «Հատուած գնացեալ Վարդգես մա-

<sup>1</sup> Հարակատար տերմինը հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ գործածել է Մ. Արեղյանը՝ անցյալ դերբայի ած վերջավորությամբ ձևը անվանելով հարակատար, իսկ եր վերջավորությամբ ձևը՝ վաղակատար (1, էջ 102): Չնայած մինչև Արեղյանը՝ Այտընյանը անցյալ դերբայով և օժանդակ բայով ներկա ժամանակաձևին տվել էր «սահմ. յարակատար» անունը (9, էջ 451), իսկ Աճառյանը և Այտընյանը հարակատար անցյալին անվանել են գերակատար (5, էջ 221):

<sup>2</sup> Արրահամյան Ա., Գրաբարի ձևաբանություն, Եր. 1976, էջ 160: Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Եր. 2004, էջ 180:

<sup>3</sup> Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր. 1981, էջ 264:

<sup>4</sup> Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Եր. 1998, էջ 8:

<sup>5</sup> Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր. 1971, էջ 102:

<sup>6</sup> Զառուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Եր. 1987, էջ 51, 52:

<sup>7</sup> Արրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր. 1953, էջ 199:

նուկն» (Խոր., II, 46), իսկ միջին դարերում **ած** վերջավորություն ունեցող հարակատար դերբայ կազմած ձևերը գործածվել են և՛ առանձին, և՛ օժանդակ բայի հետ, օր.՝ «Յորժան ես այս արուեստիս հմուտ եղայ և տեսայ շատ գրեանք, որ շինած էր ի յայս արուեստն և շատաբանած»<sup>9</sup>:

Գրաբարյան անցյալ դերբայի –եալ վերջավորությունն, ըստ Այտընյանի, «դարձել էր –ել ժ–ժԱ դարերում, իսկ –եր ձևը երևան եկավ ժԲ դարերում»<sup>10</sup>: –եալ>ել>եր հնչյունափոխական անցումը տեղի է ունեցել «զանազանություն դնելու համար –ել անցյալ դերբայի և –ել անորոշի միջև»<sup>10</sup>, իբրև համեմատության եզր, ինչպես նկատել է Աճառյանը, կարելի է վերցնել լազերենը, որը անցյալ դերբայի իմաստը արտահայտում է –eli և –eri վերջավորություններ ունեցող դերբայով<sup>11</sup>: Հետաքրքրական է այն, որ լեզվաբաններից ոչ ոք չէր հնչյունափոխական երևույթին հստակ բացատրություն չի տվել կամ պարզապես չի անդրադարձել:

Հարակատար դերբայը միջնադարում երբեմն հանդես է եկել **եր** վերջավորությամբ, օր.՝ «Սիրտ իմ, ընդե՞ր **ես խռովեր**»<sup>12</sup>: Ընդգծված քերականական ձևը արտահայտում է *խռոված ես* և *խռովել ես* իմաստները, սակայն հետագայում **եր** վերջավորությամբ դերբայը գործածվել է որպես վաղակատար դերբայ՝ պահպանվելով հիմնականում **կը** և **ել** ճյուղերի բարբառներում, ինչպես և Թավրիզի բարբառում և Նոր Բայազետի բարբառում: Այդ գործածության ժամանակ էլ դերբայական ծայնավորը անփոփոխ չի մնացել. Մարաղայի, Խոյի և Ուրմիայի բարբառներում դարձել է **ի**, իսկ Թավրիզի և Բայազետի բարբառներում՝ **է**, ինչպես՝ իւզիր իմ «ուզել եմ» (Մարաղա), խասիր էմ «հասել եմ» (Խոյ), լսիր ի (Ուրմիա), ասէր ա (Բայազետ), խասէր ա (Թավրիզ)<sup>13</sup>:

Ինչպես գրական լեզվում, այնպես էլ բարբառներում հարակատար դերբայն արտահայտում է «կատարյալ գործողություն հետևանքային երանգով», «կատարված, բայց մնայուն արդյունքով հարաձգվող կամ հարակալող գործողության կամ եղելության գաղափար»<sup>14</sup>: Կազմվելով ներկայի կամ անցյալ կատարյալի հիմքից, հանդես գալով որպես և՛ անկախ, և՛ կախյալ դերբայ: Ի տարբերություն ժամանակակից հայերենի՝ բարբառներում հարակատար դերբայը ձևավորվում է տարբեր՝ ած, ուկ և մօն վերջավորություններով ու դրանց հնչյունափոխված տարբերակներով՝ ա՞ծ, օծ, էծ, ած, օծ, ուծ, ու՛ծ, ուզ: Հնչյունական փոփոխությունները տեղի են ունեցել ծայնավորական՝ ա>ա՞>է, ա>ա՞>օ>ու// ու՛ւ՛ և բաղաձայնական՝ ծ>ծ և կ>զ անցումներով:

Նկատել ենք, որ բարբառների մեծամասնությունը հարակատար դերբայ կազմում է **ած** վերջավորությամբ՝ անգամ պատկանելով տարբեր ճյուղերի. ում, ել, ս ճյուղերի բարբառները և կը ճյուղի բարբառներից Կարնո (վառած, կայնած), Վանի (խուսած, խաղցած), Տիգրա նակերտի(սիրած, խօսած), Խար-

<sup>9</sup> Ամասիացի Ամիրդովյաթ, Օգուտ բժշկութեան, Եր. 1940, էջ 5:

<sup>10</sup> Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 96:

<sup>11</sup> Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Բ, Եր. 1961, էջ 216:

<sup>12</sup> Նույն տեղը, էջ 222:

<sup>13</sup> Մկրտչյան Ա., XIII–XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, Եր. 1938, էջ 10:

<sup>14</sup> Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 4, Բ, Եր. 1961, էջ 210:

<sup>15</sup> Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Եր. 1962, էջ 388: Մարգարյան Ա., Բայոց լեզվի քերականություն, Չևրանություն, Եր. 2004, էջ 405:

բերդ—երզնկայի (վառած, նստած). ինչպես՝ «արեվդ դուս չեզած», «էլի քրդդ—նամըխած յեղ ա գալի», «բարգացած հըրամայլմ ա» (Արարատյան բարբառի Փարպիի խոսվածք), «գեղի կըրաղին կայ նած էն» (Ար. բարբառի Գետաշենի խոսվածք)<sup>16</sup>, «Կոտրած հիլի», «խէ շատ տըկըզած», «Փօրը լավ լըցված», «կօղքին կաղնած»<sup>17</sup>, «Ճառքած—քեզրած կալըմ ա տուն» (Ար. բարբառի Արմավիրի խոսվածք)<sup>18</sup>, «Ամեն սագի մէջը գօված», «փուրդ սաղափօվ նախշ արած» (Թիֆլիսի բարբառ), «թամամացած—պըրծացրած պան չունէք» (Աստրախանի), «Ենենց խասած ախչի՜կլ» (Խոյի բարբառ)<sup>19</sup>, «դէրի փըռնած լու՜ծը» (Ղարաբաղի բարբառ), «տղան նըստած կյիր ա կըրքիս» (Հաղուրթի բարբառ)<sup>20</sup>, «Ղալամավ նախշված», «Վարդարը բախված» (Ազուլիսի բարբառ), «սարիմն էկած», «մեջքը դն տուված քնած էր», «ծեռքումըտ անցած փարեն» (Արդվին)<sup>21</sup>, «հեն էն ծըլըպատակ նստոտած» (Գորիսի բարբառ)<sup>22</sup>, «Տուրըդ պընդած, դըբլած պահի», «Կյօղը սեփեքը քօղած փախչում ա» (Բուրդուրի բարբառ)<sup>23</sup>, «Արաբը էրթացած ժամանակը», «թագավորը էլած ատենըդ» (Նոր Նախիջևանի), «հարսը դօլախը էրեսը քաշած» (Մալաթիայի)<sup>24</sup>, «թաղած տեղը ցուք» (Կարճնանի բարբառ)<sup>25</sup>, «Աք մարդը կըզնված ասըմ ա» (Կաքավաբերդի բարբառի

Վարիավարի խոսվածք), «օմման տեղան յեկած մարթիք» (Կաք. բարբառի Գուղեննիսի խոսվածք), «ճարընէրը կըտրված օ՞ղու՜մ ըն», «վըտած տեղը» (Կաք. բարբառի Ագարակի խոսվածք)<sup>26</sup>:

Կան բարբառներ, որոնցում ա ծայնավորի քմայնացման հետևանքով իբրև հարակատարի վերջավորություն գործածվում է նաև ա՞ծ—ը, ինչպես՝ «լա՞ծ—չիլա՞ծ այնօյինը», «ինքլի սփա՞րթնա՞ծ» (Կաքավաբերդի բարբառ)<sup>27</sup>, «կու՞տա՞ծ ա՞ կըլօխը՞», «Ձիը բըզա՞րա՞ծ», «էխտը բալան էլա՞ծ»<sup>28</sup>, «Իրիքլ սա՞րու՞ն սկա՞հա՞ծ մարթիքլ» (Ազուլիսի բարբառ)<sup>29</sup>, «Թուփ տա՞ռա՞ծ շընա—ցէք» (Ղարաբաղի բարբառ), «հըրդա դուս ըմ ինկա՞ծ կտօրը» (Մեղրիի բարբառ)<sup>30</sup>, «քլա՞ցա՞ծ տեղը» (Գորիսի բարբառ), «իփա՞ծ ճա՞շը», «կա՞րթա՞ցա՞ծ մարթ», «օ՞գա՞ծ ախճիկը» (Կապանի ենթաբարբառ):

Ազուլիսի և Կարճնանի բարբառներում ած—ին գուզահեռ գործածական է էծ կան օծ վերջավորությունը, ինչը և պայմանավորված է ծայնավորների ներ-

<sup>16</sup> Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Եր. 1953, էջ 228–229:

<sup>17</sup> Նույն տեղը, էջ 240–241:

<sup>18</sup> Նույն տեղը, էջ 274:

<sup>19</sup> Ասատրյան Մ., Հայ բարբառագիտության գործնական աշխատանքների ծեփնարկ, Եր. 1985, էջ 160, 174, 181:

<sup>20</sup> Պողոսյան Ա., Հաղուրթի բարբառը, Եր. 1965, էջ 259, 333:

<sup>21</sup> Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Եր. 1957, էջ 294, 451:

<sup>22</sup> Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, Եր. 1975, էջ 274:

<sup>23</sup> Մկրտչյան Ն., Բուրդուրի բարբառը, Եր. 1971, էջ 223, 228:

<sup>24</sup> Աճառյան Դ., Հայ բարբառագիտություն, Մոսկվա—Նոր—Նախիջևան, 1911, էջ 267, 415:

<sup>25</sup> Մուրադյան Հ., Կարճնանի բարբառը, Եր. 1960, էջ 245:

<sup>26</sup> Մուրադյան Հ., Կաքավաբերդի բարբառը, Եր. 1967, էջ 209, 214, 228:

<sup>27</sup> Նույն տեղը, էջ 209, 216:

<sup>28</sup> Մուրադյան Հ., Կարճնանի բարբառը, էջ 245:

<sup>29</sup> Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 253:

<sup>30</sup> Աճառյան Դ., Հայ բարբառագիտություն, նշվ. աշխ., էջ 101:

<sup>31</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 279, 474:

դաշնակության օրենքով, օր.՝ «մույն ծի մըտեծ ա՝ մաջը ըրծա՝հա՝ծ», «մաջտեղա՝մն ալ վեր ընգեծ սըտակած»<sup>31</sup>, «լսօծ չիք», «Դուրքը բնդեծ»<sup>32</sup>:

Հարակատար դերբայի **ած** վերջավորությունը բնորոշ է կը ճյուղի բարբառներին, ինչը և առնչվում է խոլերի ծայնեղացման երևույթին, իսկ **ուծ** ճյուղի բարբառներից՝ Արարատյան բարբառի Նալբանդյանի, Մարգարայի, Հայկավանի («կայնած են ընդօնք»), Վարդանաշենի («քըմա յընցած բաներց», «Պատաստակերին վե թափած սաղ օրը»), Փոքր Շահրիարի («Թաքավօրը արթած կենա»)՝ Փարպիի («Մի սօված գէլ նըխտից կըղըրված ընգըն ա») խոսվածքներին, սակայն այս խոսվածքներում կիրառում են նաև ած-ը: Ած վերջավորությամբ կազմում են Նոր Նախիջևանի՝ «վօր էրած փաղեմայա», Մուշի՝ «խըմած ին», Ռոդոսքոյի՝ «դեսած», Մուշավայի՝ «խըրդած», Նիկոմեդիայի՝ «եգած», Շապին-Գարահիսարի՝ «դիսած»<sup>34</sup>, Տրապիզոնի՝ «դունեն դուս էլած չունին», Համշենի՝ «դարձոն էլած վախղըն», Արաբկիրի՝ «աղօթած վախղը», Սեբաստիայի՝ «Գրվածը չավրիր», «բարբառ է», Եվդոկիայի՝ «քի սվիսանգ գրված է», Պոլսի՝ «բերաննիս բաբընծած», «խընդուննիս փօրեմնիս բահած» բարբառները: Վերոնշյալ բարբառներից որոշներին հատուկ է 2 վերջավորություն, օր.՝ Շապին-Գարահիսար, Եվդոկիա՝ «ծօվեն հիմա էլած», Նոր Նախիջևան՝ ած// ած («ասածը չիմ հասքընար»<sup>35</sup>, Պոլիս՝ ած// ած («Հեռույեն եգած» և «Դարձած առնըղ կասիս»<sup>36</sup>:

**Օծ** վերջավորությունով հարակատար են կազմում Կիլիկիայի՝ «օդո նու՝) էղօծ»<sup>37</sup>, Հաճնի՝ «սիյօծ», Բեյլանի՝ «ղազեթան գարտօծ վօխղը», Ջեյթունի՝ «կեճեն ծայը կանծ»<sup>38</sup>: Ջեյթունի բարբառում կրավորական բայերի համար, իսկ Բեյլանի բարբառում իբրև հարակատարի վերջավորություն հանդիսանում է նաև **սօն-ը**՝ սերելով՝ ունեն ձևի սեռականից, ընդ որում **ուծմ-ը** ծագում է \**-men/-mon*, \**-menos* մասնիկից, օր. «իփսօն «եփած», փոմօն «փոված»» (Ջեյթունի)<sup>40</sup>, «տալմօն ին» (Բեյլանի)<sup>41</sup>: Հաճնի բարբառում այն համարվում է հարակատարի ժխտական ձև, իսկ նրա հնչյունական տարբերակը՝ ման-ը, Նոր Նախիջևանի բարբառում առկա է հետևյալ ձևերում՝ «կայնըման, նստման, պառկման «կանգնած, նստած, պառկած»», իսկ Ջուղայի բարբառում կազմում է անկատար դերբայ գալ, տալ, լալ և «ն» ածանց ունեցող բայերով, օր. «գնաման ած «գնում են»»<sup>42</sup>: Ման վերջավորությամբ դերբայ գործածվում է մի շարք բարբառներում, որոնցից են Բեյլանի, Տիգրանակերտի, Խլաթի, Արեճեշի, Սշո, Ջեյթունի և այլն<sup>43</sup>: Բեսաթի և Սվեդիայի բարբառներում առկա է համապատաս-

<sup>31</sup> Աճառյան Գ., Հայ բարբառագիտություն, նշվ. աշխ., էջ 101:

<sup>32</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 155, 294

<sup>33</sup> Բաղդասարյան-Թափալցյան Ա., Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Եր. 1973, էջ 286, 296, 302:

<sup>34</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 227, 433, 381:

<sup>35</sup> Աճառյան Գ., Հայ բարբառագիտություն, էջ 180, 192, 217, 228, 236, 254, 311, 432:

<sup>36</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 257, 269:

<sup>37</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 361:

<sup>38</sup> Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 202, 423, 428:

<sup>39</sup> Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Եր. 1998, էջ 33:

<sup>40</sup> Աճառյան Գ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Բ, Եր. 1961, էջ 46:

<sup>41</sup> Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 202:

<sup>42</sup> Աճառյան Գ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 5, Եր., 1965, էջ 46:

<sup>43</sup> Ջախուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Եր. 1972, էջ 108–115:

խանաբար ուժձ «կըրուժ», «Լըզըդդունը իրինց մէտքը տրուժ էր» և ուժ «կազեթան գարտացուն վախտը», «լըսըցիր չա՞ իդուժ է, իսըրվուն կազեթան չա՞ կըրուժ է»<sup>44</sup>:

Կը ճյուղի մի շարք բարբառներում ած վերջավորությանը զուգահեռ առկա է նաև ուկ-ը կամ նրա հնչյունային տարբերակը՝ ուզ-ը: Նմանաբնույթ բարբառներից են Վանի՝ «մտավ մեր ճրուկ ածուն», Սշո՝ «ուր գըխլու հընցուզ»<sup>45</sup>, Սասունի՝ «կէղը ձեր գանուզ ըն»<sup>46</sup>, Տիգրանակերտի՝ «էրզուքնիսի գա՞րբուզ ինք», ի դեպ Տիգրանակերտի բարբառում գործած ալան է նաև ա՞ժ վերջավորությունը՝ «իրեք հա՞ղ բուզ էզա ՚ձ ին»<sup>47</sup>, իսկ Նիկոմեդիայի բարբառում ած-ը և ուկ-ը՝ «Որ շարած մարգրիտ էինք, շարեուկ շարեուկ քակըվեցանք»<sup>48</sup>: Ուկ// ուզ վերջավորությունը տարածված է նաև մի շարք ենթաբարբառներում, որոնցից են Մոկաց՝ «Լա՞ո, քո հողեն ավլուկ է, քո շորեր փռուկ է», Շատախի՝ «խայու օրենքի մեջ պսակուկ կընիկ թըղնել չընը», Սպարկերտի՝ «Մարա-մելիք քնուկ էր», Գավաշի՝ «Կլօ՞խ թռավ, քանդակ մնա կայնուկ»<sup>49</sup>, Արարատյան բարբառի Նոր Բայազետի ենթաբարբառում՝ «Էնեց պառկուկ ա»<sup>50</sup> և Տանծուտի խոսվածքում՝ «խա կայնուկ են»<sup>51</sup>, Ապարանի շրջանի Շենավանի և Արագածի խոսվածքում՝ «կարտուլ ծուկ-ցանուկ ենք», «դրսում կայնուկ են», Սևանի շրջանի Գեղամավանի խոսվածքում՝ «մամն ընդե դրուզա», «Տանը նստուկ ենք», Հրազդանի շրջանի մի շարք խոսվածքներում՝ Ջրառատի, Աթաբեկյանի՝ «Ընդու խեր-մեր մեռուկ են», «Փետ ընդե թա՞լուկ ա», իսկ Քաղսի, Աղբրակի և Մեղրածորի խոսվածքներում ուկ՝ ուզ, օր. «հասուզ, մըղուզ, տաքացուզ»<sup>52</sup>: Բայազետի և Սշո բարբառում ուկ վերջավորությամբ հարակատար է կազմվում միայն կրավորական և չեզոք սեռի բայերով, ինչպես՝ «պառկուկ, լվացուկ, կոտրուկ, նստուկ», իսկ Պուլսի բարբառում գործածական է որոշ արտահայտություններում, օր. «Անցուկը մոռացուկ կլլայ» (Անցածը կմոռացվի)<sup>53</sup>: Ուկ վերջավորությամբ հարակատար առկա էր նաև Անատոլիայում գտնվող Մուրադջա-Չալդարա-Յալա-յի բարբառում որոշ բայերի համար, օր. «դըրմուկ/ դրած/, գրմուկ /գրած/, հարմուկ/ հաշվված/»<sup>54</sup>: Նմանաբնույթ բարբառներում, ենթաբարբառներում և խոսվածքներում ուկ վերջավորությանը զուգահեռ գործածվում էր նաև ած վերջավորությամբ հարակատար:

Ուկ վերջավորության առաջացման համար հավանական է հ.-ե. \*-սց<sup>55</sup>: Նկատելի է, որ հնդեվրոպական ց-ն արմատական բաղաձայն է ուկ և ած վերջավորությունների նախածնների մեջ, բացի այդ հայերենի բարբառներում ա

<sup>44</sup> Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 202, 457, 441:

<sup>45</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 330, 387:

<sup>46</sup> Պետոյան Վ., Սասունի բարբառը, Եր. 1954, էջ 81:

<sup>47</sup> Սատրյան Ս., նշվ. աշխ., էջ 203:

<sup>48</sup> Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, Մոսկվա, Նոր-Նախիջևան, 1911, էջ 246:

<sup>49</sup> Սասնա ծոեր, հ. 1, Եր. 1936, էջ 46, 698, 828, 848:

<sup>50</sup> Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 229:

<sup>51</sup> Բաղդասարյան-Թափալցյան Ս., նշվ. աշխ., էջ 284:

<sup>52</sup> Արախամյան Ա., նշվ. աշխ., էջ 221-222:

<sup>53</sup> Աճառյան Հ., Լիակատար քերականություն, հ. 5, էջ 45:

<sup>54</sup> Սկրտչյան Լ., Անատոլիայի նորախայտ հայ բարբառները և բանահյուսությունը, Եր., 2006, էջ 234:

<sup>55</sup> Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Եր. 1998, էջ 33:

ծայնավորը ենթարկվում է հետևյալ հաջորդական անցումներին՝ ա>ա<sup>50</sup>>օ>ու<sup>56</sup>, հետևաբար ուկ և ած վերջավորությունների մմանաբնույթ կիրառությունը հաշվի առնելով՝ ծագման ընդհանրություն ենք ենթադրում: Ինչպես մատնանշել է Ա. Աբրահամյանը, գրաբարյան մատենագրության մեջ հանդիպում ենք ուկ վերջավորության ձևերի «Տեսանե՞ս զհերատուկն յանդգնեալ (Ոսկ., Մ. Բ., 23, էջ 688)»<sup>57</sup>, իսկ Ա. Մ. Ամբոսյանի վկայությամբ՝ միջինհայերենյան գրականության մեջ ուկ վերջավորությամբ հարակատար չենք հանդիպում, որը ավելի լավ պահպանվել է արևմտահայ բարբառներում<sup>58</sup> և այն բարբառներում, որոնց կրողների նախնիները աղերսներ են ունեցել Մուշի, Վանի, Շատախի, Տիգրանակերտի, Լիկոմեդիայի, Մոկաց, Ալաշկերտի և կը ճյուղի այլ բարբառների հետ<sup>59</sup>: Ժամանակի ընթացքում ուկ-ը, կորցնելով դերբայական վերջավորության արժեքը, գործածվել է իբրև բառակազմական ձևույթ՝ արտահայտելով՝ «ան վերջածանցի իմաստ: Նման գործառույթով առկա է Աշտարակի խոսվածքում՝ «ածուկ-ածան, շատ ծու ածող, խմուկ-խման, շատ խմող»<sup>60</sup> և Կապանի ենթաբարբառում՝ «ծխուկ-խմուկ մարթ և – ծխող-խմող մարդ է»:

Անկախաբար գործածելիս հարակատար դերբայը զուտ դերբայական կիրառությամբ հանդես է գալիս հետևյալ շարահյուսական պաշտոններով, օր.  
**որոշիչ՝** «ծեղունտ անցած փարեն»<sup>61</sup>, «Հեռույն էգած ծաները», «կաղեթան գարտացուն վախտը»<sup>62</sup>, «Իրիքիջին՝ անց կահած բնուն»<sup>63</sup>, «Հաքըրիս շինած պաշարը»<sup>64</sup>, «լիսա՞ծ խօսկ», «քա՞ցա՞ծ տեղը» (Գորիսի բարբառ), «տըսած տունըս», «հընդրած լօրի», «լըվա՞ցած շօր» (Կապանի ենթաբարբառ) «մնացած տասներմին հօբին».  
**ծևի պարագա՝** «մարդը կըզմված ասըմ ա»<sup>65</sup>, «իղմլա շըվարուզ նըստի»<sup>66</sup>, «չամուռը պաթած կեցիլ է»<sup>67</sup>, «թեզընր տված լեշու՞մ ա» (Գորիսի բարբառ), «կաղնած սպասում ըս լա» (Կապանի ենթաբարբառ).  
**Ժամանակի պարագա՝** «ջիրին քըշտին նստած», «հըրցընում ըմ ու՞րա՞ն՝ հալա չըհառած»<sup>68</sup>, «Հա՞լա՞ մըխըրտ խոսած հու՞ն», «նօր սարիմեն յեկած»<sup>69</sup>, «յու՞րա՞ն չըտըսած» (Կապանի ենթաբարբառ), «Հա՞լա՞մ ծեզ լըսած վէջ» (Գորիսի բարբառ): Պոլսի և Նոր Նախիջևանի բարբառներում հարակատար դերբայը, միանալով թրք. – իբեն մասնիկին, արտահայտում է ժամանակ, օր.  
«բռնած իբեն «երբ (ես) բռնեցի»» (Պոլիս), «նայաձնիբէնդ/ նայաձ-

<sup>50</sup> Մուրադյան Դ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ1, եր. 1982, էջ 109:

<sup>57</sup> Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, եր. 1953, էջ 222:

<sup>58</sup> Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, եր. 1972, էջ 108–119:

<sup>59</sup> Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, հ. 2, եր. 1975, էջ 249:

<sup>60</sup> Բաղդասարյան-Թափալցյան Ա., Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, եր. 1973, էջ 131:

<sup>61</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 451:

<sup>62</sup> Աճառյան Դ., Հայ բարբառագիտություն, էջ 257, 441:

<sup>63</sup> Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 175:

<sup>64</sup> Մկրտչյան Ն., նշվ. աշխ., էջ 117:

<sup>65</sup> Մուրադյան Դ., Կաքավաքերդի բարբառը, էջ 233, 209:

<sup>66</sup> Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, եր. 1957, էջ 386:

<sup>67</sup> Աճառյան Դ., Հայ բարբառագիտություն, էջ 268:

<sup>68</sup> Մուրադյան Դ., նշվ. աշխ., էջ 210, 216:

<sup>69</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 277, 451:

քենդ «եբր դունայում էիր» (Նոր Նախիջևան), իսկ թրք. – դան մասնիկի հետ՝ բացասական իմաստ, օր.՝ «չէգածդան «դեռ չեկած», չըսածդան «դեռ չասած»» (Պոլիս)<sup>70</sup>:

Հարակատար դերբայը հանդես է գալիս մաս իբրև փոխանուն, «մի բառածնում համատեղում բայական հատկանիշի և առարկայի իմաստները»<sup>71</sup>, ստանում է հոգնակիակերտ մասնիկ, որոշիչ հոդ՝ ենթարկվելով տվյալ բարբառին բնորոշ հոլովման և կատարելով տարբեր պաշտոններ, ինչպես՝ ուղիղ խնդիր՝ «Լու՛զվին ծակածը նշտարն էլ չի ծակել», «քի՛ ասածը չիմ հասքընար», «հայ էղածները բլլի յալ չէ», «Աշգինը ա՛ն գՕյօծը անցուց»<sup>72</sup>, «Նարա հօրը մեռածը մեկ դարի էղավ»<sup>73</sup>, «ըսօրեն կերածըս էլ, խմածըս էլ մըրանըմ եմ»<sup>74</sup>, «յըլլէխում փըթաթածը տու՛ս օնըմ»<sup>75</sup>, «վասդըգածը, դադածը բութուն խունի գուդա», ենթակա՝ «Աղ ըսածդ եռէ էր»<sup>76</sup>, «Իմ կուփածը հինգ ա դըեռալ», «Ջըհանդաման յեկածը»<sup>77</sup>, «Մեծի ասած, պուճուրի լսած»<sup>78</sup>, «Քամու պիրածը քամին էլ տանօլվա»<sup>79</sup>, «իմ ու՛զածը Նիզյա՛րն ի», միասնության անուղղակի խնդիր՝ «Էրագումը տեսածի հիդ», ստորոգելի՝ «Էն ասածըս ի հա»<sup>80</sup>, «պառի կըրճըցրածն ա»<sup>81</sup>, «քօ ասածը ըլի»<sup>82</sup>, «Անցածը անցած է», ժամանակի պարագա՝ «Առածիս բէս փախա. Դէսածին բէս քովըս էգավ»<sup>83</sup>, անջատման անուղղակի խնդիր՝ «էրվա ցանածիցը հատ ա թափէր»<sup>84</sup> և այլն:

Հարակատար դերբայը արտահայտում է ստացականություն, եթե ստանում է դիմորոշ հոդ, օր.՝ լսածս խոսքը, գրածթ թուխտը և այլն, ինչը հատուկ է որոշ բարբառների, իսկ Պոլսի բարբառում այդ երևույթը դրսևորվում է, եթե դրվում է հոդակիր գոյականից առաջ, օր.՝ «Գացած դունս «իմ գնացած տունը», դեսաձ մարթըտ «քո տեսած մարդը»»: Հոլովածների և հոդային տարաբնույթ կիրառությամբ է հանդես գալիս Նոր Նախիջևանի բարբառում, օր.՝ «Խէվ եղածս վընխէ ՚ն գիդիս» (Խեմք լինելս ինչի՛ց իմացը), «Հայ էղածնեն գամըչման» (Սմաչում են, որ հայ են), «Նարա չալածին մայէ» (Տես, թե նա ինչպես է նվագում): Բացառական հոլովածնը մի դեպքում արտահայտում է ձև՝ «Ջարգածն իմացա» (Ջարկելու ձևից իմացա), մյուս դեպքում՝ պատճառ՝ «Վախէցածն գիյնի» (Վախենալու պատճառով ընկնում է), իսկ մի այլ գործածության մեջ՝ փոխանակ, փոխարեն՝ «Հօն գէցածէդ հօս արի» (Փոխանակ այնտեղ կենալու՝ այստեղ արի):

<sup>70</sup> Աճառյան Հ., Լիակատար քերականություն, հ. 5, էջ 40, 43:

<sup>71</sup> Արքախանյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 389:

<sup>72</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 280, 362, 432:

<sup>73</sup> Աճառյան Հ., Լիակատար քերականություն, հ. 5, էջ 42:

<sup>74</sup> Մկրտչյան Ն., նշվ. աշխ., էջ 232:

<sup>75</sup> Դարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 162:

<sup>76</sup> Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, էջ 224:

<sup>77</sup> Մուրադյան Հ., Կաթավաքերդի բարբառը, էջ 209, 213,

<sup>78</sup> Գրիգորյան Ա., Չնշվ. աշխ., էջ 232:

<sup>79</sup> Մկրտչյան Ն., Բուրդուրի բարբառը, Եր. 1971, էջ 223:

<sup>80</sup> Սաստրյան Ա., նշվ. աշխ., էջ 161, 181:

<sup>81</sup> Բաղդասարյան-Թափալցյան Ա., նշվ. աշխ., էջ 291:

<sup>82</sup> Դարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 240:

<sup>83</sup> Աճառյան Հ., Լիակատար քերականություն, հ. 5, էջ 40:

<sup>84</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 229:

Գործիական հոլովածնով կամ այն է կապակցությամբ հարակատար դերբայը արտահայտում է կարճատև գործողության գաղափար՝ «Ասածովը յեզավ» (Յենց որ ասաց, եկավ), «Դեսածն ալ ան է» (Յենց որ տեսավ)<sup>85</sup>:

Հարակատար դերբայը կիրառվում է տարբեր հարադրություններով, օր.՝ «գեննին վեր ընգած ա», «Երկաթըդ փանջարա արած», «մեջքը դն տուված»<sup>86</sup>, «շըտեղ ա վեր ընգած» «նամուս արած», «ռէխը քիցա»<sup>87</sup>, «սա»սիս քիցա»<sup>88</sup> իմ լալ», «համա հինգ արած», «աթ հի»նչ ա տեռած», «թողը յեկած ա», «նշընվիլի հասած տըղա», «քոռ ա րած», «անընը տիրած ին», «ցավ ա տըված»<sup>89</sup>, «ջանա յեկած շինա»ցիքլ», «թաքօրն ապրած կենա», «խարաք արած», «անց կահած թեղուն»<sup>90</sup>, «Պատատակերին վե թափած սաղ օրը», «խրաղ տըված բաներըն», «խա»րուբ դըվում է»<sup>91</sup> և այլն:

Իբրև կախյալ դերբայ՝ հարակատար դերբայը մասնակցում է ներկա և անցյալ ժամանակների կազմությանը: Ինչպես արևելահայ գրական լեզվում, այնպես էլ Արարատյան, Թիֆլիսի, Շամախու, Աստրախանի, Ջուղայի, Ուրմիայի, Խոյի, Մարաղայի բարբառներում հարակատար դերբայով ժամանակաձև է կազմվում միայն կրավորական և չեզոք-սեռի այն բայերով, որոնք ցույց են տալիս գործողության հետևանք կամ գործողություն կատարողի վիճակ, իսկ ներգործական սեռի բայերը նման գործառույթով գործածվելիս արտահայտում են կրավորականի իմաստ, ինչպես՝ «ըսօր մերած ա՝ թաղված չի», «ճօնդին կաննած ին ընդօնք» (Բուրդուրի բարբառ)<sup>92</sup>, «յըլդա վաստակած ամ» (Ջուղայի բարբառ), «չարխենն փընջան է բաշած» (Թիֆլիսի բարբառ), «մըռնելե վախտը հասած ա» (Ղարաղաղի բարբառ)<sup>93</sup>, «ստեղ պան ա կրած» (Աստրախանի բարբառ)<sup>94</sup>, «վոր ըլած ի»<sup>95</sup> (Խոյի բարբառ):

Յուրաքանչյուր բարբառ հարակատար դերբայն և անցյալ ժամանակաձևերը կազմում է օժանդակ բայի իրեն բնորոշ խոնարհված ձևերով: Կան բարբառներ, որոնցում հարակատար դերբայը արտահայտում է զուտ հարակատարի իմաստ՝ Արարատյան (նստած ա—նստած էր), Թիֆլիսի (մօզօնած իս—մօզօնած էիր), Պոլսի (սիրած են—սիրած էին), Մուշի (խըմուզ է—խըմուզ էր), Կարնո(վառած ենք—վառած էինք), Կիլիկիայի (կօյօծ էք—կօյօծ աք), Սասունի (կըրուզ ըս/ կըրիյըս—կըրուզ էր/ կըրիյէր), Վանի (խուսած ենքլ—խուսած ինքլ), Նոր Նախիջևանի (սիրած ին—սիրած էին), Արդվինի (նստած իք—նստած էիր), Հաղորթի (մընացած ըմ—մընացած ի), Ղարաբաղի (պիրած ըմ—պիրած ի), Բուրդուրի (հասած ըն—հասած ըն իղի/հասած ին), Գորիսի (յեշա»ծ ա»—յեշա»ծ էր) և այլն, իսկ մի խումբ բարբառներում հարակատար ձևերը արտահայտում են և՛ հարակատարի, և՛ վաղակատարի իմաստները՝ Ազուլիսի (թական ըս — թական ըս նէլ), Ղարաղաղի(գիրած ըմ—գիրած ըմ լա»լ), Կարճնանի (մնահած

<sup>85</sup> Աճառյան Հ., Լիակատար քերականություն, հ. 5, էջ 40, 42–43:

<sup>86</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 229, 280, 451:

<sup>87</sup> Մուրադյան Հ., Կաթավաթերդի բարբառը, էջ 214–217, 223, 232:

<sup>88</sup> Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 165, 171, 175, 176:

<sup>89</sup> Բաղդասարյան–Թափալցյան Ա., նշվ. աշխ., էջ 286, 302, 441:

<sup>90</sup> Սևրոյան Ն., Բուրդուրի բարբառը, էջ 225, 233:

<sup>91</sup> Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 259, 269, 303:

<sup>92</sup> Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, էջ 85:

<sup>93</sup> Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 185:

ըս-մնահած ըս լէ), Համշենի (պըռնած էք-պըռնած էքը), Մեղրի (խըսահած ըն-խըսահած ըն լա"), Կաքավաբերդի(իվա"ցա"ծ ա-իվա"ցա"ծ լա"), Կապանի ենթաբարբառ (օ"գա"ծ ըք-օ"գա"ծ լա") և այլն:

Բնագրային օրինակներում նկատելի են հարակատար ժամանակածնի օժանդակ բայի նախադաս և հետադաս կիրառություններ, ինչպես՝ «կըտրիատված յետ ա տռած», «Ունդուք շատ ըն քըրքընքած», «հիրա"ց ա նեցած չիմ», «Վօրօշած ըք, հըռնացած», «հըրացաննէն քաշած ըն», «յէկած ըս աս քըշէրը», «մարթ ա փախած», «հի"նչ ըս տըսած», «խուրջիննէն վիր ըս կ'ա"լա"ծ»<sup>94</sup>, «դիփ խափած ինք ու խափած», «Ասած է, ինչ յերգիր գնա», «ծէր չա"յին տակը էրա"ծ ար», «մըննագ նստած էս հօդ», «ա "լ ասծու տըված նի», «փընտնէն իկյած ա», «Հըրդա դուս ըմ իկյած կտօրը»<sup>95</sup>, «լըսըցիր չա" իդուծ է», «կիղը ծածգըվուծ իր», «կիղէն ծարքը գայնուծ ին», «պապ նըստուկ էր փանջարէն»<sup>96</sup>, «Ա' կընթըռ մանցած իս», «կէղծէն ծայր կանօծ ին»<sup>97</sup>, «ջեր էլի աստուծ օդօրմած է», «էն գլ-խէն էրած իմ», «ըրախսք ըն հըվա"քվա"ծ», «մույն ծի մըտծ ա" մաջը», «ջա"-նա"վա"ր ըմ սպանած», «դունէ բառուզ է, «հա"դ բուզ էգած ին», «էրգութնիս գա"րքուզ ինք»<sup>98</sup>, «Շատ էլ նէղեցած ի», «գէղի ծիրին կայնած էն», «սըրդի միջին ցըցված է», «խա կայնուկ էն»<sup>99</sup>, «պէրած ըն տօն», «հաց ըմ կէրած», «շօ"րէրը լըվա"ցա"ծ չըս», «շտը"դ ըս քեցած» (Կապանի ենթաբարբառ):

Հետաքրքրական պատկեր է ներկայացնում անցյալ ժամանակի կազմությունը. մի շարք բարբառներ անցյալ ժամանակը հարակատարը կազմում են օժանդակ բայի անցյալի խոնարհված ձևերով, իսկ մյուսները՝ ներկա ժամանակածնիս ավելացնում են տարբեր մասնիկներ՝ նիս, նէլ, լէ, լա", լա"լ, որոնք լինել բայի հնչյունափոխված ձևերն են: Առաջին խմբի բարբառներից են Արարատյան (նստած էր աթոռին), Թիֆլիսի(տեսած էի քիզ), Ղարաբաղի (սիրած իք մըէզ), Գորիսի (քյա"ցա"ծ ին տօն), Տրապիզոնի («քի իմացա"ծ իք»), Պոլսի («խօրունգն էգած էր»), Նոր -Նախիջևանի («Արաքը գնացած էր») <sup>100</sup>, Արդվինի («մէկ մէկուու հետ խառնված էյին») <sup>101</sup> և այլն: Երկրորդ խմբի մեջ են մտնում Հաղորթի («տա"սը կիրած ըմ նիս»), Ագուլիսի («շօտ անքամ լըսծ ըմ նէլ»), Մեղրիի («ճօտը հըստակած ա լա"»), Կարճնանի («օդ ըս լէ թաղած»), Կաքավաբերդի («շու"դավ նեցած ըմ լա"լ», «ըգատած լա») <sup>102</sup>, Ղարադաղի («չենը ծասկված լա"լ»«տօնը կողվ լա"լ ընգած») <sup>103</sup>, Կապանի ենթաբարբառ (քեցած լա" մըր շէնը, ու"րա"ն տըսած ըմ լա") և այլն: Ուսումնասիրության ընթացքում նկատել ենք, որ մի քանի բարբառներում առկա է անցյալ հարակատարի 2 ձև, օր.՝ Հաղորթի՝ մընացած իր // մընացած ըմ նիս, Բուրդուրի՝ հասած ընք // հասած ընք իդի, Համշենի՝ խաղցած էլը// խաղցած ունէլը, իսկ Մարաղայի, Խոյի և

<sup>94</sup> Մուրադյան Հ., Կաքավաբերդի բարբառը, էջ 214–224:

<sup>95</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 250, 278, 422, 473–474:

<sup>96</sup> Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, էջ 122, 441:

<sup>97</sup> Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 303, 428:

<sup>98</sup> Սաստրյան Ս., նշվ. աշխ., էջ 160–161, 177–179, 203–204:

<sup>99</sup> Բաղդասարյան-Թախալցյան Ս., նշվ. աշխ., էջ 286, 302:

<sup>100</sup> Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, նշվ. աշխ., էջ 181, 256, 268:

<sup>101</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 451:

<sup>102</sup> Մուրադյան Հ., Կաքավաբերդի բարբառը, էջ 215, 230:

<sup>103</sup> Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 304, 428:

Ուրմիայի բարբառներում անցյալ ժամանակը կազմվում է ներկային ավելացնելով օժանդակ բայի էր ձևը, ինչպես՝ կիրած եմ էր, ուզած իս էր:

Մի շարք բարբառներ գրական արևելահայերենի նման քիչ են գործածում հարակատար ժամանակաձևեր, իսկ մի խումբ բարբառներ էլ ընդհակառակը, անգամ հարակատարի և լինել բայի խոնարհված ձևերի հետ կազմում են բաղադրյալ ժամանակաձևեր, ինչպես՝ Ղարաբաղի՝ «չայ տեսած ա ինում, ամա դափա տեսած չինում», Պոլսի՝ բահած ըլլամ, բահած ըլլամ նե, բահած ըլլալու ըլլամ նե, բահած էղած ըլլամ, բահած էղած ըլլամ նե, բահած բիդի ըլլամ (նե), բահած զըլլամ (նե)<sup>104</sup> և այլն, Աստրախանի՝ «սա փչացած իլի», «կտավի վերեն ա քաշած իլեր»<sup>105</sup>, Չամչենի՝ «զեղեն հայս բերած ունեին», հոյի՝ «պանի մէջ էփած ըլլի», Տիգրանակերտի՝ «էրգու քուղէ գարբուզ գեղնան»<sup>106</sup>, Կաքավաբերդի՝ «սէրտը նեղ կյա՛ննա՛ծ ա՛ն նում», «չա՛րչին ալ նեցած ա նում», «նեցած ըջ լա՛լ գիրիզմօտը», «հօր յօտրած նին յա խօ՛զա՛ծ նին», «պահած ա նիլ ըստեղ»<sup>107</sup>, Լոռու՝ «սաղ օրը քընած էր ըլնմ», «փլավ էփած կըլիքն»<sup>108</sup>, Գորիսի՝ «ծու՛ն յէկած ա ինիմ», «ըրըբօչութ»<sup>109</sup> և ըրած ըլում, «նստած քօն լա՛ծ ա լա՛լ»<sup>109</sup>, Կապանի ենթաբարբառ՝ քօնլա՛ծ լա՛, քօնլա՛ծ ա՛ն լա՛լ, քօնլա՛ծ ա՛ն նօ՛լու, քօնլա՛ծ կինի, քօնլա՛ծ պիտի նի: Բացի այդ Գորիսի բարբառում և Կապանի ենթաբարբառում հարակատար դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակներ են ձևավորվում նաև կամ պակասավոր բայով, ինչպես՝ Գորիսի՝ լիսա՛ծ կաս, քա՛ցա՛ծ կաք, Կապանի՝ տըսած կամ, քեցած կաք և այլն: Իսկ Պոլսի և Չամչենի բարբառներում հարակատար ներկա և անցյալ ժամանակաձևեր են կազմել ունիմ բայի հարադրությամբ՝ Պոլսի՝ «բերած ունիս, բերած ունէիք», Չամչենի՝ «զնացած ունիմ, ասած ունէի»<sup>110</sup>:

Այն բարբառներում, որոնք հաճախ են գործածում հարակատարով ձևեր, հարակատար դերբայը հանդես է գալիս նաև բաղադրյալ ստորոգյալի կազմում իբրև հանգույց, օր.՝ «մարթիք ին լա՛ծ», «լափ դա՛ջա՛լ ին լա՛ծ», «ախչիկն ա լա՛ծ», «ան ա լա՛ծ», «լափ դոչաղ ա լա՛ծ»<sup>111</sup>, «Մուն օղծ էլա՛ծ, էստը բալան էլա՛ծ»<sup>112</sup>, «կըծօղ շօն ա լա՛ծ», «լավ մարթ ա լա՛ծ», «հի՛նչ ա տըռած» (Կապանի ենթաբարբառ): Առկա են նաև հարակատարով արտահայտված բայական զուգադրություններ, ինչպես՝ Թօխարը յէկած լա՛լ ձօ՛րըրը կալած»<sup>113</sup>, «մույն ձի մըտծ ա՛ն մաջը ըրծա՛հած», «մաջտեղա՛մն ալ վեր ընգեծ սըտակած», «ջարդած ըն խարօք արած»<sup>114</sup>, «ավարա յիք դէռած յէկած», «վընդավը յէկած ա աս քարին վերան կաննած», «քօռ ա արած, տիրած ինդէղ», «կօխած ա մին մըլէկի մաչ, տիրած ընդէղ», «վըտկին հանած ըն, հերմը տիրած»<sup>115</sup>,

<sup>104</sup> Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 277, 309:

<sup>105</sup> Աճառյան Յ., Չայ բարբառագիտություն, էջ 85:

<sup>106</sup> Ասատրյան Ս., նշվ. աշխ., էջ 181, 204:

<sup>107</sup> Մուրադյան Յ., Կաքավաբերդի բարբառը, էջ 209–234:

<sup>108</sup> Ասատրյան Ս., Լոռու խոսվածքը, Եր., 1968, էջ 155–156:

<sup>109</sup> Մարգարյան Ա., Գորիսի բարբառը, Եր., 1975, էջ 300–306:

<sup>110</sup> Աճառյան Յ., Լիակատար քերականություն, հ. 4, Բ, էջ 225:

<sup>111</sup> Մուրադյան Յ., Կաքավաբերդի բարբառը, Եր. 1967, էջ 215–225:

<sup>112</sup> Ղարիբյան Ա., Չայ բարբառագիտություն, Եր. 1953, էջ 253:

<sup>113</sup> Նույն տեղը, էջ 303:

<sup>114</sup> Աճառյան Յ., Չայ բարբառագիտություն, էջ 102:

<sup>115</sup> Մուրադյան Յ., Կաքավաբերդի բարբառը, Եր. 1967, էջ 212–230:

«ծըր տօն յէկած ա քէցած», «կատվէն փըռնած լա՛ պահած», «յէկած ըք լա՛լ տըսած օ՛՛գա՛՛ծ» (Կապանի ենթաբարբառ):

Ընդհանրացնելով նշենք, որ հարակատար դերբայը բարբառներում ավելի շատ տարածված է **ած** վերջավորությամբ և նրա հնչյունական տարբերակներով՝ ա՛՛ծ, օծ, էծ, ած, օծ, ուծ, ուէծ: Այս հնչյունական տարբերակներով և անգամ **ուկ** և **ուգ** վերջավորություններով կազմավորվող ձևերին զուգահեռ մի շարք բարբառներում, ինչպես նշեցինք, հանդես է գալիս **ած**–ով վերջավորվող հարակատար դերբայը, իսկ դերբայական մյուս զուգածները, ժամանակի ընթացքում իմաստափոխվելով, կիրառվում են նոր գործառնությով: Լեզվական այս երևույթը, բնականաբար, գրական լեզվի ազդեցության հետևանք է: Վերոնշյալ լեզվական իրողությունները փաստում են բարբառներում հարակատար դերբայի կիրառական յուրահատկությունների մասին, ինչը և պայմանավորված է հայ բարբառների զանազանությամբ:

C. МАНУЧАРЯН

#### ПРИЧАСТИЕ ДЛИТЕЛЬНОГО ДЕЙСТВИЯ В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

Глаголы и причастия в диалектах имеют разное употребление. Они имеют окончания -ац, -ук, -мон и др.. В отличие от современного армянского языка, некоторых диалектах причастия образуются от глаголов действительного, страдательного и среднего залога. Возвращаясь к вышеуказанному ряду употреблений, мы исследовали происхождение окончаний, подробно рассмотрели синтаксические употребления причастий и голов в диалектной речи.

S. MANUCHARYAN

#### THE PAST PARTICIPLE IN THE ARMENIAN DIALECTS

The Past Participle has different expressions in the dialects. It is expressed by the endings *-ats*, *-oak*, *-mon* and their phonetic versions. Unlike the Modern Armenian in some dialects the Past Participle is formed with the verbs of passive, active and neuter cases.

Reverting to the above-mentioned applications we have studied both the original of these endings and the syntactical use of the Participle.